ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՈՒԱԾՈՂ ԶՕՐԱՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՐԻՆԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karineal@mail.ru

ՄՈՒՏՔ

1917ի փետրուարեան յեղափոխութեան, ապա եւ հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ կովկասեան ռազմաճակատից ռուսական զօրքերի ետքաշման, ռազմական բարդ մեքենայի քայքայման հետեւանքով ռազմաճակատն ամբողջովին դատարկուել էր: Ստեղծուած պայմաններում ազգային զօրամիաւորումների ստեղծումը դարձել էր անհրաժեշտութիւն: Դրանում շահագրգռուած էին թէ՛ Ռուսաստանը, թէ՛ Դաշնակիցները, եւ թէ՛ հայ ժողովուրդը: Ժամանակաւոր կառավարութիւնը եւ ռուսական բարձր հրամանատարութիւնը, ելնելով ռազմաճակատի շահերից, նախաձեռնում են ազգային զօրամիաւորումների ստեղծման: Զօրքերի ազգայնացման նպատակով 1917ի ամռանը ռուսական բանակի գերագոյն գլխաւոր հրամանատարութեան թոյլտուութեամբ ստեղծւում են երկուական գումարտակից բաղկացած 6 հայկական գնդեր:

1917 Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներից սկսում է ձեւաւորուել Կովկասեան զօրագունդը[1]: Հայկական զօրամասեր կազմակերպելու համար ներգրաււում են ցարական բանակի հայազգի զօրավարներ ու բարձրաստիճան սպաներ Թովմաս Նազարբեկեանը, Մովսէս Սիլիկեանը, Դանիէլ-Բէկ Փիրումեանը եւ ուրիշներ:

Հոկտեմբերի վերջերին զօրագունդի հրամանատար է նշանակւում Թովմաս Նազարբեկեանը (*կոմիսարն* էր Դրօն), որն իր նշանակման մասին հեռագիրը ստանալով Վանի շրջանից անցնում է Թիֆլիս ձեռնարկելու սպայակոյտի եւ հաստիքային սահմաններում հայկական զօրագնդի կազմակերպման աշխատանքները:

Կովկասեան ռազմաճակատի քայքայման պայմաններում ազգային զօրամիաւորումների ստեղծումը անհրաժեշտ էր նաեւ հայերին: Ռազմաճակատի դատարկումը եւ թիկունքում գլուխ բարձրացրած ամենաթողութիւնը հարցականի տակ էին դրել ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական

իդէալների իրականացումն, այլ նրա գոյատեւումն ընդհանրապէս: Ստեղծուած իրավիճակը հայ ժողովրդից պահանջում էր հոգեւոր, եւ ֆիզիկական ուժերի գերագոյն լարում: Կովկասեան ռազմաճակատի քայքայման պայմաններում անհրաժեշտ էր դառնում ինքնապաշտպանութեան նպատակով ազգային զօրամիաւորումների ստեղծումը:

Հայ ժողովրդի քաղաքական ձգտումների իրականացման եւ նրա ֆիզիկական գոյութեան ապահովման նպատակով հայկական զօրամիաւորումների ստեղծման գործում մեծ դեր են կատարում Հայոց Ազգային Խորհուրդը, Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը[2], Բաքուի եւ Երեւանի Հայոց Ազգային խորհուրդները: Հայոց Ազգային Խորհուրդը՝ Ստ. Մամիկոնեանի գլխաւորութեամբ ստեղծում է մի յատուկ մարմին, որը զբաղուելու էր հայկական նոր զօրամասերի ձեւաւորմամբ:

Ռազմամթերքի ձեռքբերման, ճանապարհների կարգաւորման, զօրքի հանդերձաւորման եւ այլ բազմաթիւ առօրեայ խնդիրների լուծման համար Հայոց Ազգային Խորհուրդը անհրաժեշտ 40 մլն. գումարը հայթայթելու համար դիմում է հայ հասարակութեանը: Հաշուի առնելով այն, որ փողերի հաւաքումը գիւղերից եւ քաղաքներից շատ ժամանակ կը խլի, Հայոց Ազգային Խորհուրդը որոշում է հարկի տակ դնել Հայաստանի եւ հայկական սփիւռքի խոշոր քաղաքների: Ըստ այդ որոշման Բաթումը պէտք է տրամադրէր 11 մլն., Բաքուն՝ 10 մլն., Թիֆլիսը՝ 4 մլն., Կարսը՝ 2 մլն., Մոսկուան՝ 5 մլն., Պետրոգրադը՝ 2 մլն. եւն., Ալեքսանդրապոլը (1 մլն. ռուբլի), Կիսլովոդսկի հարուստները պէտք է յատուկ հարկ վճարէին[3]: Հայաստանի եւ հայկական սփիւռքի խոշոր քաղաքներին առաջարկւում է ներքին փոխառութիւն կազմակերպել, վերցնել գումարը հարուստներից, այնուհետեւ վերադարձնել նրանց փողերը՝ հաւաքելով հասարակութիւնից:

Ազգային զօրամիաւորումների ստեղծման գործին իրենց աջակցութիւնն են յայտնում նաեւ քաղաքական ուժերը: Մասնաւորապէս 1918 Փետրուարի 16-18ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած ՀՅԴ Շիրակի Նահանգի առաջին համագումարը հրահանգում է զանազան պատասխանատու հիմնարկներում պաշտօնավարող բոլոր դաշնակցականներին գործել կուսակցական որոշումների եւ հրահանգների համաձայն, բարձր պահելով կուսակցական կարգապահութիւնն ու հեղինակութիւնը: Համագումարը, նկատի ունենալով այն, որ ռազմաճակատի պահպանման գործը ծանրացել է հայ ժողովրդի վրայ, կոչ է անում շրջանի բոլոր զէնքի ընդունակներին անմիջապէս անցնել հայ զօրքի շարքերը, այն պայմանով, որ 19-32 տարեկանները անմիջապէս ուղարկուեն ռազմաճակատ, իսկ 32ից աւելի տարիք ունեցողները դրուեն Կենտրոնական Կոմիտէի տրամադրութեան տակ: Համագումարը որոշում է մի կողմից բացատրական աշխատանքներ իրականացնել Շիրակի ամբողջ հայութեանը՝ ստեղ-

ծուած բացառիկ կացութեան ու նրան սպասուող վտանգի մասին եւ յորդորել հայրենիքի փրկութեան համար զինուորագրուել եւ առաւելագոյն զոհողութիւնների գնով փրկել այն ամէնը ինչ թանկ է հայ ժողովրդի համար: Միաժամանակ, զգուշացնելով, որ բոլոր անպարտաճանաչները կուսակցական որոշման համաձայն անմիջապէս կ'ենթարկուեն Դաշնակցութեան դատին, իբրեւ հայրենիքի դաւաճաններ: Համագումարը դիմում է նաեւ զինուորական մարմիններին, հրամանատարներին եւ առաջարկում Ալեքսանդրապոլում եւ այլ կենտրոններում եղած զօրքերն անմիջապէս ուղարկել Էրզրում: Կուսակցական մարմիններին առաջարկում է նուազագոյն անդամներ պահել տեղական գործերի համար, իսկ մնացածներին՝ զօրամասերի հետ միասին ուղարկել ճակատ: Առաջարկում է զինուորական բարձր մարմիններին տեղափոխել Ալեքսանդրապոլ կամ ռազմաճակատին աւելի մօտ վայր[1]:

1918 Ապրիլին Թուրքիայի դէմ պայքարելու համար Կարմիր Գուարդիայի ջոկատներ ստեղծելու կոչով կոմունիստներին է դիմում ՌԿ/բ/Կ Ալեքսանդրապոլի Կոմիտէն. «... Ում համար թանկ է ազատութիւնն ու Յեղափոխական հայրենիքը թող շտապէ ցուցակագրուել նոր կազմուող «Կարմիր գւարդիայի» շարքերում, որ հիմնուած է փոխադարձ յարգանքի եւ յեղափոխական դիսցիպլինայի վրայ:

Շտապենք, ընկերներ յապաղելը յանցանք է:

Այն ընկերները, որոնք արդէն գտնւում են զանազան զօրամասերում, թող մնան իրենց տեղերը եւ կատարեն իրենց քաղաքացիական պարտականութիւնը»[1]:

Սակայն ստեղծուած ջոկատներից ոչ մէկը ունեցաւ այն համահայկական դերն ու նշանակութիւնը, ինչպիսին Անդրանիկի Հայկական Առանձին Հարուածող Ջոկատն էր, որը ձեւաւորուեց Էրզրումի անկումից յետոյ:

Հայոց ազգային զօրամիաւորումների ստեղծումով շահագրգռուած էին նաեւ Դաշնակիցները: 1917 Դեկտեմբերի 12ին (Նոյեմբերի 29ին) կազմակերպուող հայկական զօրագնդի հրամանատար Նազարբեկեանը Հայոց Ազգային Խորհրդում առաջարկում է հայերից զօրամասեր կազմակերպել ու ընդառաջել Դաշնակիցների՝ թուրքահայ ստորաբաժանումներ հաւաքելու առաջարկին[4]: Նման առաջարկութեամբ հանդէս է գալիս նաեւ Պօղոս Նուպարը: Ընդ որում խոստանում է նաեւ դրամական աջակցութիւն[5]:

1917 Դեկտեմբերին Անդրանիկը, ելնելով վերոյիշեալ առաջարկներից, ձեռնամուխ է լինում ջոկատի կազմաւորմանը[6]:

Հայ կամաւորներին եւ նրանց հրամանատարին վիճակուած էր կրել Արեւմտեան Հայաստանի կորստեան մեծ ցաւը:

Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի եւ Ապահովութեան Խորհրդի մեծամասնութեան կարծիքով Էրզրումի՝ ճանապարհների հանգոյցի պաշտպանութեան համար հարկաւոր էր մեծ ժողովրդականութիւն վայելող ազգային գործչի ներկայութիւն: Այդ գործի համար նրանք Անդրանիկին էին յարմար համարում, թէեւ որոշ շրջահայեաց գործիչներ, սիրելով Անդրանիկին եւ բարձր գնահատելով նրա դերը ազգային ազատագրական շարժման պատմութեան մէջ, համոզուած էին, որ դա կարող է վատ վերջանալ նրա համար[7]: Նախ, որ բարձրաստիճան շատ սպաներ կարող էին չենթարկուել զինուորական կոչում չունեցող Անդրանիկին, եւ երկրորդ, այստեղ տիրող վիճակը - մեղմ ասած - անմխիթար էր: Վիճակը չի փոխում բարձրաստիճան սպաների մօտ Անդրանիկի հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով նրան զօրավար-մայորի կոչում շնորհելը[8]:

Գալով Էրզրում, Անդրանիկը փորձում է շտկել այստեղ ստեղծուած բարձիթողի վիճակը: Էրզրումի վրայ թուրքերի յարձակման նախօրէին ռուսական բանակն արդէն նահանջել էր, պաշտպանութեան գործը կազմալուծուել: Ռուսների մօտ այն տրամադրութիւնն էր, որ Կովկասն անջատուել է Ռուսաստանից եւ պէտք չէ այն պաշտպանել, նրանք դժուարութեամբ էին զէնք ու զինամթերք տալիս նորաստեղծ հայկական զօրամասերին: Հայերի մօտ իշխող էր տուն վերադառնալու տրամադրութիւնը: Ի տարբերութիւն՝ թուրքերը գործում էին մեծ եռանդով: Չնայած Անդրանիկի ջանքերին, Փետրուարի 27ին Էրզրումն ընկնում է[9]: Էրզրումի անկումով փակուեցին Արեւմտյան Հայաստանի դռները հայոց առաջ, միաժամանակ բացուեց թուրքերի ճանապարհը դէպի Արեւելեան Հայաստան: Էրզրումի անկմանը յաջորդեցին Կարսի, Սարիղամիշի եւ Ալեքսանդրապոլի անկումները: Ցեղասպանութեան վտանգը կախուեց նաեւ արեւելահայոց վրայ:

1918ի թուրքերի առաջխաղացման պայմաններում տեղի է ունենում հայկական ուժերի վերակազմակերպում: 1918 Մարտի 1ին կովկասեան ռազմաճակատի գլխաւոր հրամանատար Եւգենի Լեբեդինսկին հեռագիր է ուղարկում զօրավար Նազարբեկեանին եւ յայտնում Առանձին հայկական զօրագնդի ստեղծման մասին որոշումը[10]: Այն ձեւաւորւում է ռուսական բանակի հայկական գնդերի՝ Հայկական զօրագնդի (մօտ 12 հազար ռազմիկ) եւ հայդուկային ջոկատների՝ Անդրանիկի ղեկավարած Յատուկ Հայկական Հաւաքական Ջոկատի (մօտ 15 հազար ռազմիկ) միաւորմամբ՝ Նազարբեկեանի հրամանատարութեամբ: Առանձին Հայկական Զօրագունդը նախկին Հայկական Կորպուսի եւ Յատուկ Հայկական Հաւաքական Ջոկատի մեքենական միաւորումը չհանդիսացաւ, այլ վերակազմաւորուեց[11]:

Էրզրումի անկումը ոչ միայն ռազմական, ռազմագիտական, քաղաքական, այլ նաեւ բարոյական տեսակէտից ծանր տպաւորութիւն է գոր-

ծում հայկական բանակային զօրագնդի եւ ընդհանրապէս, հայ բնակչութեան վրայ: Այն մեծ ողբերգութիւն եղաւ մասնաւորապէս Անդրանիկի համար: Մարտի 17ին Անդրանիկը հրաժարական է տալիս եւ Նազարբեկեանի հրամանով նրա փոխարէն նշանակւում է Պաւէլ Բեժանբէկը[12]:

Էրզրումի անկումից յետոյ, երբ այլեւս պարզ էր, որ Արեւմտեան Հայաստանը կորած էր հայութեան համար, եւ անհրաժեշտ էր կասեցնել թուրքական առաջխաղացումը Արեւելեան Հայաստան, Հայաստանի Ապահովութեան Խորհրդի նախագահ Պարոյր Լեւոնեանը Մարտի 26ին Անդրանիկին առաջարկում է Նազարբեկեանի հայկական զօրագնդի կազմում ստեղծել առանձին ջոկատ «...Հայաստանի ապահովութեան խորհուրդը ի նկատի ունենալով Էրզրումի անկումից յետոյ ճակատի ծանր դրութիւնը,- գրում է Լեւոնեանը,- ինչպէս նաեւ Ձեր հրաժարականէն առաջացած դժուարութիւնները՝ երկրապահ զօրամասերի անմիջական վերակազմութեան գործի մէջ տեխնիկական, յարաբերական եւ այլ պայմանների հետ, միաժամանակ խորը գնահատելով ներկայ ճգնաժամային օրերուն Ձեր զինուորական փորձառութիւնէն եւ հմայքէն օգտուելու անհրաժեշտութիւնը, որոշեց դիմել Ձեզ, որ շուտափոյթ ձեռնարկէք մեր զօրամասերու կազմութիւնը Ձեր հրամանատարութեան ներքոյ մարզուած եւ անձնուէր ուժերուն եւ փութաք ճակատի պաշտպանութեան»[13]:

Այս գրութեան մէջ նաեւ յոյս էր յայտնւում, որ Անդրանիկի հմայքի եւ հեղինակութեան շնորհիւ հնարաւոր կը լինէր հաւաքել գոնէ 1000 հոգի, որոնց թիւը յետագայում եւս կը շատանար: Գրութիւնից երեւում էր, որ Հայոց Ազգային Խորհուրդը եւ Դաշնակցութիւնը դէմ էին Անդրանիկի առանձին զօրամաս ունենալուն, այն պատճառաբանութեամբ, որ դա կը քայքայէր ազգային զօրամիաւորումները, քանի որ Անդրանիկի հմայքը կը ստիպէր շատերին թողնել իրենց զօրամասերը եւ միանալ Անդրանիկին, կամ որ աւելի վատ է, առիթ դարձնելով այդ, ընդհանրապէս չմիանալ ոչ մի զօրամասի. «Սրանով յայտնում եմ,- ասւում էր նշուած գրութեան մէջ,- որ ինչպէս Ռուսահայոց Ազգային խորհուրդը, նոյնպէս եւ բժիշկ Զաւրիեւը Ապահովութեան խորհրդի այդ ցանկութեանը միանգամայն դէմ են այն պատճառաբանութեամբ, որ Ձեր առանձին զօրամասերը, որտեղից զինուորները պիտի օգտուեն առիթից, ասելով, թէ մենք գնում ենք Անդրանիկի մօտ, եւ այսպիսով քայքայեն իրենց զօրամասերը, մանաւանդ որ վերջիններս կիսաքայքայուած դրութեան մէջ են եւ որոնց Ազգային խորհուրդը աշխատում է կարգ ու կանոնի մէջ դնել»[14]:

1918 Ապրիլին Անդրանիկը Ալեքսանդրապոլի Գաւառում ձեռնամուխ է լինում գերազանցապէս արեւմտահայերից բաղկացած Հայկական Առանձին Հարուածող Զօրամասի (ՀԱՀԶ) ստեղծմանը: «Հայկական Առանձին Հարուածող Զօրամասի կազմութեան սկզբնական նպատակը,-

նշուած էր զօրամասի գործունէութեան մասին պատմող օրագրութան մեջ,- պիտի լինէր հարաւի ուղղութեամբ կապուիլ անգլիական ուժերու հետ: Բայց աւելի վերջը Կովկասի ինքնապաշտպանութեան մտահոգութիւնը առաւելակշիռ դարձաւ եւ որոշուեցաւ, որ Հարուածող Զօրամասը մնայ Կովկասի սահմաններուն մէջ»[15]:

Նոր կազմաւորուող զօրամասի կորիզը կազմում էր Թիֆլիսում ձեւաւորուած Սիբիրեան Վաշտը[16]: Վերցնելով այդ վաշտը եւ իր 800 արեւմտահայ զինուորներին, Անդրանիկը Ապրիլի մէկին Թիֆլիսից գալիս է Ալեքսանդրապոլ, որտեղ եւ ձեւաւորւում է ՀԱՀԶը: Պատահական չէր «առանձին» բառը զօրամասի անուանման մեջ: Հայոց Ազգային Խորհուրդն ամէն ինչ անում էր, որպէսզի այդ զօրամասը առանձնացուէր թշնամու յարձակման գլխաւոր ուղղութիւնից եւ մի կողմ գտնուող գծի վրայ ուղարկուէր: Ազգային Խորհուրդը Փետրուարի 23ին Ալեքսանդրապոլ տեղափոխուած Նազարբեկեանին զգուշացրել էր, որ պատշաճ չէ Ազգային Խորհրդի վստահութիւնը Անդրանիկի նկատմամբ, ցանկալի համարելով, որ նա զօրամասին այնպիսի մի խնդիր առաջադրի եւ այնպիսի հեռաւոր մի վայր ուղարկի «որպէսզի նրա գործողութիւնները վնասակար ազդեցութիւն չունենան կորպուսի մարտական խնդիրների կատարման վրայ»[17]:

Ապրիլի 13ին Նազարբեկեանը հրամայում էր Անդրանիկին իր ջոկատով պահպանել Ախալքալաքի եւ Ալեքսանդրապոլի հաղորդակցութիւնը եւ հսկողութիւն սահմանել Կարսի Մարզի վրայ[18]: Մայիսի 8ին Հայաստանի Ապահովութեան Խորհրդի նախագահ Վահան Փափազեանը զօրավար Անդրանիկին ուղղուած պաշտօնական գրութեան մէջ Անդրանիկի ուժերի տեղաբաշխումը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ կովկասեան կառավարութիւնը ամէն զոհողութիւններով ջանում է որեւէ առիթ չտալ, որ թուրքական բանակը սահմանն անցնի: «Կը գտնենք,- նշուած էր այդ գրութեան մեջ,- որ գլխաւորապէս թուրքահայ զօրամասերի եւ Ձեր ներկայութիւնը այնտեղ վերոյիշեալ տեսակէտից կարող է յարմար առիթ համարուել թուրքական բանակի կողմից եւ անցանկալի արդիւնք ունենալ թէ զինադադարի յարգման եւ թէ մանաւանդ թուրքահայերի շահերի տեսակէտից»[19]:

Թուրքերը նպատակ ունենալով գրաւել Արեւելեան Հայաստանը եւ շարունակել հայոց ցեղասպանութիւնը, իրենց առաջխաղացումը պայմանաւորում էին իբր թէ մուսուլմանների նկատմամբ հայերի կատարած բռնութիւններով: Հայոց քաղաքական կեանքը տնօրինողները, ընդունելով թուրքական դիւանագիտութեան այս խայծը՝ տեղիք չտալ թուրքական առաջխաղացմանը, չէզոքացնում են Անդրանիկին: Կարծում ենք հենց այս էր Ալեքսանդրապոլի պաշտպանութեանը, եւ Ղարաքիլիսայի ու Սարդարապատի հերոսամարտերին Անդրանիկին չմասնակցելու իրա-

կան պատճառը: Իսկ ինչ վերաբերում է նրա եռօրեայ ճակատամարտերին, որ նա տուեց Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, բազմահազար գաղթականութեան հետ, ընկնելով շրջապատման մէջ, հարկ է, որ դիտուեն մայիսեան հերսամարտերի բաղկացուցիչ մաս:

Մասնաւորապէս, Ալեքսանդրապոլի պաշտպանութեանը Անդրանիկը չկարողացաւ մասնակցել, քանի որ տեղեակ չէր թուրքական յարձակման մասին: Իսկ Մայիսի 15ի Նազարբեկեանի հեռագրով, որով յայտնւում էր վերջնագրի խախտման եւ թուրքերի յարձակման մասին, խորհուրդ չէր տրւում մտնել քաղաք, այլ անցնել թշնամու թիկունքը եւ գործել իրադրութեանը համապատասխան՝ օգնելով Ալեքսանդրապոլի ջոկատին[20]: Այդ մասին է վկայում նաեւ Սմբատը Մայիսի 18ին Անդրանիկին ուղղած իր նամակում, որտեղ ներկայացնելով Ալեքսանդրապոլի անկման հանգամանքները, գրում է. «Քո գործը կորպուսի կարգադրութեամբ եւ հեռագրի համաձայն կայանում է նրանում, որ պաշտպանես այն սահմանը, ինչ որ առաջ էր նշանակւած, բայց փոխանակ Ալեքսանդրապոլի, պէտք է յենւիս Վորոնցովկա-Ջալալ-օղլու վրայ, այստեղի հետ կապ հաստատի Ղարաքիլիսայի վրայով, եթէ թշնամին ուժեղ յարձակում գործի եւ դու անկարող լինես դիմադրել, պէտք է նահանջես դէպի Լոռու դաշտը Ջալալ-օղլու ուղղութեամբ»[21]:

Իսկ մինչ այդ Անդրանիկը, յանկարծակի յայտնուելով թուրքական զօրքի դէմ յանդիման երեք օր կռիւ է տալիս չէզոքացնելով թուրքերի կողմից պաշարման վտանգը: Ալեքսանդրպոլի յանձնուելուց յետոյ Անդրանիկը, գրեթէ բոլոր կողմերից շրջապատուած լինելով թուրքերով, ընկնում է անելի մէջ: Հայկական զօրագնդի միւս զօրամասերի հետ կապ հաստատելու միակ ելքը նա տեսնում է դէպի երկաթգիծը շարժուելու մէջ եւ խուճապի մատնուած գաղթականութեան հետ միասին շարժւում դէպի Ջալալ-օղլի: Երկու օրուայ կատաղի կռիւներից յետոյ Անդրանիկը շարժւում է դէպի Դիլիջան: Այստեղ, իմանալով Բաթումի Պայմանագրի կնքման մասին, հեռանում է Հայաստանի Հանրապետութեան սահմաններից:

1918 Յուլիսին Անդրանիկը Գորիսից իր սպայակոյտին եւ զինուորներին առաջարկում է չմտնել Հայաստանի Հանրապետութեան սահմանները, քանի որ Բաթումի Պայմանագրով Հայաստանի կառավարութիւնը պարտաւորուել էր զինաթափ անել Անդրանիկի ջոկատը: Նա պահանջում է եւրոպական երկրներից եւ Հայաստանի Հանրապետութիւնից երաշխիքներ՝ արեւմտահայութեան ապահովութեան: «Այդ պայմանները չընդունելու դէպքում,- ասուած էր նշուած գրութեան մէջ,- հարկադրւած եմ յանուն թրքահայ վերջին մնացած բեկոր գաղթականութեան եւ զօրամասերու ֆիզիկական եւ բարոյական ապահովութեան զէնքը վայր չդնել մինչեւ վերջին շունչ»[22]: Ըստ այդ ծրագրի, Անդրանիկն իր կամաւորներով

պէտք է շարժուէր դէպի Ջուլֆա-Սալմաստ-Ուրմիա եւ ապա ուժեր կենտրոնացնելով մտնէր Վան, Էրզրում, շարժուէր դէպի Կարս: Անդրանիկի այդ ռազմերթն իր ողջ էութեամբ ուղղուած էր արդէն կործանման եզրին կանգնած հայութեան փրկութեան նպատակին:

Անդրանիկի ՀԱՀՋի գործունէութեան մասին կան բազմաթիւ իրարամերժ կարծիքներ, աւելին՝ մեղադրանքներ՝ Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ճակատամարտերին չմասնակցելու համար:

Ինքը՝ Անդրանիկը շատ բարձր է գնահատում ՀԱՀՋի դերը Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա տեղի ունեցած ճակատամարտերում: Բաքուում տեղակայուած բրիտանական զօրքերի հրամանատար զօրավար Ուիլիըմ Թոմսոնին ուղղած 1918 Դեկտեմբերի 2ի նամակում նա գրում է. «Սարիղամիշի եւ Կարսի պարտութիւններից յետոյ արեւմտահայերի բարոյական կորովն ընկած էր: Հայաստանի ապահովութեան խորհուրդն ինձ առաջարկեց ձեռնամուխ լինել Հայկական առանձին հարուածող ջոկատի կազմաւորմանը: Ապրիլի 23ին ես կազմակերպեցի զօրամաս, նպատակ ունենալով պաշտպանել Ռուսաստանի հայերին նրանց սպառնացող վտանգից:

Իմ զօրամասն անկասկած կարեւոր դեր կատարեց Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա տեղի ունեցած պատմական ճակատամարտերում: Ղազանչի գիւղում Ապրիլի 23ին տեղի ունեցաւ Շիշթափայի ճակատամարտը: Այնուհետեւ Մայիսի 15, 16, 17ին երեք օր կռուել ենք Գիւլիբուլաղում, Բոզէղուշում եւ Ջալալօղլիում, որից յետոյ իմ զօրամասը անցել է Դիլիջան, որտեղ ճամբարել է մինչեւ Թուրքիայի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ պայմանագրի կնքումը»[23]:

ՀԱՀՋը գործեց մէկ տարի՝ 1918 Ապրիլից մինչեւ 1919 Ապրիլը: Կռուելով սկզբում զօրավար Նազարբեկեանի զօրամասի հրամանատարութեան ներքոյ, ապա՝ Ղարաքիլիսայի պարտութիւնից եւ Բաթումի Պայմանագրի կնքումից յետոյ, չցանկանալով յարաբերութիւններ ունենալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ, ՀԱՀՋը գործել է լիովին անկախ «...անոր սահմաններէն դուրս, հող ունենալով միայն իր հրամանատարին աննուաճ հաւատքը դէպի վերջնական Յաղթանակը, անոր կամքը, զինուորներուն անձնուրացութիւնը, քաջութիւնը եւ հայ ժողովուրդի զոհաբերութեան եւ ազատութեան ոգին»[24]:

Այստեղ հրապարակուող յուշագրութիւնը, որը պահւում է Հայաստանի Ազգային Արխիւի 370 ֆոնդում, կարեւոր սկզբնաղբիւր է ՀԱՀՋի եւ նրա հրամանատարի՝ Անդրանիկի գործունէութեան մասին: Յուշագրութիւնը ներկայացուած է ոչ-ամբողջութեամբ, այլ միայն 1918-1919ի Անդրանիկի գործունէութեան վերաբերող մասերը: Այն մեքենագիր է: Պահպանել ենք ուղղագրութիւնը, կատարել ենք որոշ փոփոխութիւններ:

Յուշագրութիւնը հրապարակելիս, մեր առաջ խնդիր ենք դրել բացայայտել Անդրանիկ զօրավարի կերպարը եւ նրա գործունէութեան հետ կապուած որոշ հանգամանքներ: Խօսքը վերաբերում է մասնաւորապէս, Էրզրումի անկմանը, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ճակատամարտերին նրա չմասնակցելու հանգամանքների, Դաշնակցականների հետ փոխյարաբերութիւնների բացայայտմանը:

Խաչատրեան Միհրան Յովհաննէսի
Յուշեր Եւ Խոհեր [25]

...ՆԱԽԹՈՒԼՈՒՂԻՑ[26] ՄԻՆՉԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Ինչպէս արդէն վերեւում ասուեց, կամաւորները բաժանուած էին երեք էշելոնների[27]:

Զօրավարը իր շտաբով տեղաւորուեց երկրորդ էշելոնում:

Վերջապէս ատացուեց շարժուելու հրամանը:

Շոգեքարշերը տնքալով տանում էին իրենց բեռը, սակայն կամաւորներին այդ արագութիւնը դանդաղ էր թւում: Նրանք շտապում էին ժամ առաջ հասնել այնտեղ, որն այդքան մօտիկ էր իրենց սրտին եւ որը զազրելի թուրքերի հրոսակները բռնի հեռացրել էին նրանցից:

Նախօրօք նախազգուշական հրահանգներ էին տրուել եւ միջոցներ ձեռնարկուել, ճանապարհի անակնկալներից խուսափելու համար: Գնացքը, որ պէտք է անցնէր Շուլաւերով ստիպուած էր ճեղքել թշնամական օղակը: Այդ շրջանում մուսաւաթական առանձին հրոսակախմբերը թուրքական էմիսարների[28] ղեկավարութեամբ զինուած խմբեր էին կազմակերպել եւ համարեա անանցանելի էին դարձնում երկաթուղային եւ խճուղային ճանապարհները: Առանց մեծ զոհերի եւ թալանուելու այդ շրջանն անցնելն անհնարին էր:

...Սակայն մենք կամաւորներս, ականատես եղանք մի իրողութեան, որը մինչ այդ աւանդական առասպել էր թւում իւրաքանչիւրիս:

Մեր երեք էշելոնները, միմեանցից մի քանի հարիւր մետր հեռաւորութեամբ դանդաղ շարժւում էին, որոնց ամբողջ ղեկավարութիւնը զօրավար Անդրանիկի ձեռքում էր, առանց որեւէ դիպուածի անցաւ այդ վտանգաւոր արգելուած զոնան: Սեփական աչքերով տեսնում էինք, թէ ինչպէս ճանապարհի երկու կողմերում յարմար եւ անառիկ դիրքեր գրաւած մուսաւաթական ջոկատները դեռեւս հեռուից լսելով շոգեշարժի հեւքը, «Անդրանիկն է գալիս» բղաւելով տեղեկացնում էին միմեանց եւ խուճապահար փախչում էին դիրքերից եւ անհետանում հեռուներում:

Այսպիսի դէպքեր մինչեւ Շուլաւերից դուրս գալը մի քանի անգամ կրկնուեց եւ դա աւելի բարձրացրեց կամաւորների ոգին ու սէրը դէպի, առանց այդ էլ պաշտելի զօրավարը:

1918թ. Փետրուարն էր, երբ մենք մտանք Ալեքսանդրապոլ[29]:

Կամաւորների շարքերը հետզհետէ խտանում էին նորանոր մարտիկներով: Այստեղ մեզ միացաւ թուրքական բանակից փախած մի հայ սպայ Միսակ անունով, մասնագիտութեամբ բժիշկ:

Առաւօտ էր: Ալեքսանդրապոլեան ցրտաշունչ առաւօտ:

Զօրավարը կացինը ձեռքին անձամբ բացում էր զէնքի արկղերը եւ այն բաժանում նոր համալրուած կամաւորներին: Իսկ յիշեալ հայ հրամանատարը զօրավարի կողքից քայլում էր ինքնագոհ, ձեռքերը մէջքին դրած, որպէս անգամ չմտածելով օգնելու մասին:

Չնայած զգալի ցրտին, այնուամենայնիւ Անդրանիկը բացեց յիսուն արկղ:

Իւրաքանչիւր կողքից դիտողը կը նկատէր, որ այդ հայ հրամանատարի անպատկառ վերաբերմունքը դէպի զօրավարը նրան դուր չէր գալիս եւ ինչ որ բան լեռնանում էր զօրավարի կրծքում: Աւարտելով յիսուներորդ արկղի բացումը, յանկարծ շուռ եկաւ դէպի մողէսի սառնութիւն ունեցող այդ հրամանատարը եւ խիստ զայրացած բղաւեց. «Ինչ է, Էնվէրն ես իմ գլխիս», եւ այնպիսի մի ապտակ հասցրեց նրա դէմքին, որ նա կտրուած ծառի պէս տապալուեց գետնին: Միայն որոշ միջամտութիւնից յետոյ պարազատուեց այդ անարժան մարդը եւ տեղափոխուեց հիւանդանոց, որից յետոյ նրա ինչ լինելու մասին չիմացանք:

ԴԷՊԻ ՌԱԶՄԱԴԱՇՏ. ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Կարճ դադարից եւ անհրաժեշտ նախապատրաստութիւնից յետոյ ... շարժուեցինք դէպի Կարս: Չնայած այս երկու քաղաքների միջեւ ընկած տարածութիւնը կարճ էր, բայց մեզ՝ կամաւորներիս շատ երկար թուաց:

Մենք շտապում էինք: Ինչ որ մի ուժ մեզ կոչում էր՝ ժամ առաջ հասնելու: Մեզ թւում էր, որ այս փոքրաթիւ կամաւորական զօրամասը կոչուած էր ամէն ինչ անելու եւ ի վիճակի է դրան: Միաժամանակ մեզ առաջ էր մղում մի անսովոր զգացում, որը, սակայն գուցէ մինչ այդ զօրամասի զինուորները չէին զգացել. դա հայրենի գիւղը, տունը տեսնելու, անյայտ մնացած հարազատներին գտնելու ձգտումն էր: Այդ էր պատճառը, որ մեզանից աւելի դիւրաբորբոքները գտնուեցին, որ նոյնիսկ ցանկանում էին շոգեշարժից իջնել եւ ինչ որ արագընթաց միջոց գտնել տեղ հասնելու համար: Սակայն զօրավար Անդրանիկի հրամանը այնպիսին էր, որին որեւէ զինուոր չէր համարձակւում աւելորդ քայլ անել:

Աւելորդ շտապողականութիւնը երկար չտեւեց: Շոգեքարշը փնչացնելով մտաւ Կարսի կառամատոյցը եւ ... կանգ առաւ:

Կամաւորները իրար հրմշտելով խռնուել էին վագոնների լուսամուտների մօտ եւ ցանկանում էին հաղորդակից լինել դրսի աշխարհին:

Առանց զօրավարի հրամանի մենք իրաւունք չունէինք դուրս գալ վագոններից:

Պարզուեց, որ քաղաքի բնակչութիւնը օր առաջ իմանալով զօրավար Անդրանիկի գլխաւորութեամբ կամաւորական զօրամասի այցի մասին, ըստ արժանւոյն նախապատրաստուել էր:

Բազմութիւնը չտեսնուած էր: Մեզ համար անհասկանալի էր, նրանք հաւաքուել էին ժողովրդից սիրուած ու նրա համար մաքառող Անդրանիկի՞ն դիմաւորելու, թէ՞ այն նորակոչ կամաւոր հայորդիներին, որոնք ցանկանում էին իրենց սեփական արիւնը տալով արիւնաքամ ու բզկտուած հայրենիքին յարութիւն հաղորդել: Իհարկէ, դրանք երկուսն էլ հաւանական էին, սակայն նախապատուութիւնը զօրավարի կողմն էր, քանզի մեզ նման կամաւորների Կարսը եւ նրա բնակիչները մի քանի անգամ էին տեսնում:

Համաժողովրդական ցնծութիւն էր:

Մեծ ճաշկերոյթ էր նախապատրաստւում զօրավարի եւ նրա կամաւորների պատուին: Ժողովուրդը ուռաներով ցնծութեան բացականչութիւններով լցրել էր ողջ քաղաքը:

Հիւրասիրուելու համար ամիսներն էլ չէր բաւականացնի կարսեցիների ճոխ սեղանից օգտուելու: Սակայն զօրավարը հաշուի առնելով մոմենտի կարեւորութիւնը եւ լաւ հասկանալով իւրաքանչիւր կամաւորի ձգտումը, նախօրօք հրամայել էր երկու երեք ժամ մնալ Կարսում՝ մի քանի կարեւոր ձեռնարկումների նպատակով: Նա նոյնիսկ թոյլ չտուեց, որպէսզի իրեն պատուած քաղաքացիները կամ քաղաքի իշխանութիւնները, որեւէ շռայլ բան կատարեն եւ բաւարարուեցինք այն պարզ բայց թանկարժէք ողջոյններով ու հասարակ նուէրներով, որ տրամադրուեց մեզ կառամատոյցում եւ շրջակայքում:

Սակայն ինչ որ բանից խիստ վրդովուած՝ [Անդրանիկը] հրամայեց շարժուել մէկ ժամ յետոյ. մենք տեղաւորուեցինք նոյն գնացքում եւ շարժուեցինք դէպի Սարիղամիշ: Նոյնպիսի ողջոյնների հանդիպեցինք Սարիղամիշում:

Դեռեւս ճանապարհին, Անդրանիկը կամաւորներին բաժանել էր ըստ խմբերի ու կարգել համապատասխան հրամանատարներ: Խմբերը կազմուած էին այնպէս, որպէսզի դրանցից իւրաքանչիւրում ընդգրկուի հիմնականում մէկ վիլայէթի կամ գաւառի անձինք: Այդ բանը կատարուել էր միայն մէկ նպատակով՝ ուժեղացնել տեղական հայրենասիրութիւն: Մինչեւ Բասէն գաւառի Քէօփրի-Քէօյ կոչուող հայկական մեծ գիւղը, կամաւորական ողջ զօրամասը դեռեւս չէր բաժանուել: Քէօփրի-Քէօյից մեր խումբը շարժուեց դէպի Քոսոտ կոչուող սարը, որտեղ Բիջօ Ափրօն

կռուում էր Հասան աղայի դէմ եւ գտնուում էր ծանր դրութեան մէջ: Կամաւորական թարմ ուժերի շնորհիւ շրջապատուեց եւ ոչնչացուեց Հասան աղայի հրոսակախումբը, իսկ աղան գերի վերցուեց ու կալանաւորուեց մի բնակարանում, որի հսկողութիւնը Բիջօ Ափրոյի կողմից յանձնարարուեց երկու զինուորի: Խորամանկ աղան կարողացել էր խաբէութեամբ թունաւորել զինուորներին եւ փախչել:

Քէօփրի-Քէօյից Անդրանիկը բաժանուեց մեզնից եւ շարժուեց դէպի Էրզրում, նախապէս յանձնարարելով մեր խմբին, շարժուել դէպի Խնուս եւ միանալ գնդապետ Սամարցեւին:

Յաջորդ օրը մենք արդէն Գումզումում էինք, որտեղ արդէն թէժ կռիւներ էին գնում: Մենք անմիջապէս փոխարինելով կռուողներին գրաւեցինք նրանց դիրքերը: Յաջորդ օրը թուրքերն անցան յարձակման, որին մենք պատասխանեցինք կատաղի կրակով: Ընդհատումներով ճակատամարտը տեւեց երկու օր, որը ոչ մի յաջողութիւն չբերեց թուրքերին: Աննշան էին նաեւ մեր յաջողութիւնները: Մեր յաջողութիւնը կայանում էր նրանում, որ չնչին կորուստների գնով մենք կարողացել էինք մեծ թուով զինուորներ շարքից հանել թուրքական բանակից, իսկ տերիտորիալ առումով երկու կողմերն էլ երկու օր շարունակ կռուեցին նոյն դիրքերում, առանց որեւէ քայլ կատարելու: Այդ ճակատամարտը աւելի շատ նման էր դիրքային փոփոխութեան, քան թէ լուրջ ռազմական գործողութիւնների:

Չպէտք է մոռանալ, որ թուրքերը մեծ բնոյթի ռազմական գործողութիւններ չձեռնարկեցին այդ երկու օրերի ընթացքում: Նրանք արդէն լսել էին Անդրանիկի Էրզրումի ռազմաճակատ մեկնելու մասին եւ դա սարսափով էր լցրել նրանց սրտերը: Նրանք որպէ առ որպէ սպասում էին սարսափելի լուրերի ու գործողութիւնների, իսկ այդ էլ խանգարում էր նրանց լուրջ գործողութիւններ ձեռնարկելուն:

Երկօրեայ մարտերից յետոյ մեզ փոխարինելու եկան նոր, թարմ ուժեր, որից յետոյ ... վերադարձանք Խնուս: Խնուսում մեզ տեղաւորե-ցին զինուորական, հապճեպ կառուցուած բարակներում՝ հանգստանալու:

Խնուսում հանգստի օրերին մի դէպք տեղի ունեցաւ: Մի օր, երբ իւրաքանչիւր զինուոր տեղաւորուել էր իրեն յատկացուած տեղում եւ պատրաստւում էր հանգստանալու, յանկարծ ներս մտաւ հազարապետ Բոբիկեանը, եւ չգիտես ինչից վրդովուած սկսեց ծեծել հանդիպած զինուորին: Սակայն դա չեղաւ վերջինը: Նա հերթով ծեծում էր կամաւորներին, եւ երբ հերթը ինձ հասաւ, նա գազազած շուռ եկաւ դէպի իմ կողմը, ես առանց տատանուելու հրացանը ուղղեցի նրա կրծքին ոչ թէ վախեցնելու այլ ուղղակի սպանելու դիտաւորութեամբ: Այդ տեսնելով, նա յանկարծակի եկած, անմիջապէս դուրս եկաւ բարակից: Ընկերներս որպէս պատիժ ինձանից վերցրեցին զէնքը: Երկար չէր անցել, երբ սադիստի

յատկութիւններով օժտուած հազարապետը շարքի կանգնեցրեց մեր կամաւորական խմբին եւ սկսեց ստուգել: Ստուգման անուան տակ նա անխնայ ծեծում էր նրանց, ովքեր դուր չէին գալիս իրեն: Եւ այսպէս, երբ հերթը հասաւ մի բուլանղցի կամաւորի, յանկարծակի այնպէս հարուածեց այդ խեղճ հայրենասէրի դէմքին, որ նրա աջ աչքը կուրացաւ: Եթէ մենք զինուորներս չկարողացանք պատժել այդ դահիճ ու դաւաճան հազարապետին, ապա գնդապետ Սամարցեւը, իմանալով այդ անմարդկային կամայականութիւնների մասին, զինուորների շարքի առաջ, հրապարակային կարգով պոկել էր նրա հրամանատարական ուսադիրները եւ խիստ նախատինքներով՝ կոչել էր մարդկային ստոր վիժուածք...:

Դէպքերն ընթանում էին ի վնաս մեզ: Եւ ահա մի օր, ենթասպայ Մուշեղեանը հաւաքեց կամաւորներին եւ յայտնեց, որ անհրաժեշտ է ուսապարկերը լցնել փամփուշտներով եւ ձեռքն ընկած ուտեստով, քանի որ պէտք է նահանջել: Նա կարճ, զինուորականին յատուկ ոճով, պատմեց, որ զօրավար Անդրանիկը թողել է Էրզրումը, իսկ Սմբատը՝ Կամուրջ գիւղը եւ մեզ սպառնում էր թուրքերի պաշարումը:

Սկսուեց[ին] նահանջի ծանր օրերը: Մեր նահանջը նման չէր սովորական զօրամասի նահանջի: Մեզ հետ էին նաեւ տեղական բնակչութիւնը՝ հիմնականում կանայք, երեխաներ եւ ծերունիներ: Դրանց գալիս էին աւելանալու ... անասունները: Ցանկանում էին որքան հնարաւոր է, ոչինչ չթողնել թշնամուն: Անասունների մի հսկայական նախիր, որը խանգարում էր առաջընթացը, զինուորները հրաժարուեցին տանել եւ թողեցին բախտի յոյսին: Սակայն ես ու Կնձու գիւղացի Շառոյեան Խաչատուրը (Խեչօն) հաւաքեցինք դրանք ու քշեցինք առաջ, նահանջող բանակին հասնելու համար: Յաջորդ առաւօտեան գնդապետ Սամարցեւը հասաւ մեզ եւ տեսնելով ինձ եւ Խեչոյին հսկայական նախիրը քշելիս, հարցրեց, թէ ինչու ենք այդ անում: Ես պատասխանեցի որ գաղթականները չեն հասցրել տանելու, մենք տանում ենք դրանց տէրերին հասցնելու նպատակով, եւ միաժամանակ չենք ցանկանում, որ դրանք ընկնեն թշնամու ձեռքը: Այդ լսելով գնդապետն իջաւ ձիուց, հայրաբար համբուրեց Խեչոյին եւ ինձ ու գովելով մեր հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնը՝ կարգադրեց զինուորներին մեզ փոխարինելու:

Մեր նահանջը շարունակուեց մինչեւ Մանազկերտի մօտ գտնուող Սանջան գիւղը: Այստեղ մենք իմացանք, որ Սմբատը նահանջել է ու գտնուում է Ալաշկերտում:

Այդ օրը մենք գիշերեցինք Սանջանում, իսկ յաջորդ օրը շարժուեցինք Ալաշկերտի Ղարաքիլիսի բերդը եւ միացանք Սմբատի խմբին: Մէկ գիշեր մնալով Ղարաքիլիսայի բերդում, առաւօտեան ինչ հնարաւոր էր վերցրեցինք, իսկ մնացածը այրելով շարժուեցինք դէպի Քոռ Մոսըլ

գիւղը: 48 ժամուայ նահանջից յետոյ հասանք Քոռ Մոսըլ, որտեղ մեզ միացաւ նաեւ Բուլանղցի Մուրադի խումբը:

Միւս օրը հասանք Իգդիր, ու միքանի օր մնալուց յետոյ կամաւորների մի մասը բռնեց Էջմիածնի ուղղութիւնը: Անցանք Արաքս գետը: Այստեղ մեզ դիմադրութիւն ցոյց տուեցին Ջանֆիդա գիւղի թուրքերը: Մեր ուժգին դիմադրութիւնից յետոյ նրանք ստիպուած եղան նահանջելու: Ջանֆիդայից ինքնաբերաբար մեկնեցինք Էջմիածին, մինչ տեղ հասնելը խմբի շարքերը նօսրանում էին: Հմուտ ղեկավարի բացակայութիւնը, մեր յետագայ անելիքների մասին որեւէ ծրագրի բացակայութիւնը կամաւորներին ստիպեց ցրուել իրենց ընտանիքների մօտ եւ այլուր:

Ողբերգական էր հայ ժողովրդի վիճակը, այս ու այն կողմը վխտում էին անտուն, անտեղ, մերկ ու քաղցած տասնեակ հազարաւոր գաղթականներ, ծնողազուրկ, որբ մանուկներ:

Չկար ղեկավար որեւէ մարմին, որ դրանց պատսպարէր ու խնամէր: Ամէն մարդ իր գլուխը պահելու մասին էր մտածում: Իրադրութիւնն աւելի ահաւոր ու ահռելի դարձաւ 1918 Մայիսին, երբ ոճրապարտ թուրք կառավարութիւնը խախտելով Բրեստ-Լիտովսկի իր իսկ ստորագրած պայմանագիրը[30], հրամայեց Արեւելեան Բանակի հրամանատար Վեհիբ փաշային գրաւել Հայաստանն ու կովկասեան երկրամասը:

Սկսւում էր թուրքական խաժամուժ զօրքերի տմարդի յարձակումը[31]:

Ալեքսանդրապոլի հայկական զօրքերը անակնկալի ենթարկուելով, որոշ դիմադրութիւնից յետոյ լքում են դիրքերը եւ ետ նահանջում զանազան ուղղութիւններով: Թուրքական զօրքերը պաշարման օղակում են առնում զօրավար Անդրանիկի զօրամասը, որը շուրջ 10 օր հերոսական սխրանքների գնով ճեղքում է թուրքական զօրքերի պաշարողական ամրակուռ շղթան եւ շուրջ երեսուն հազար բնակիչներ հետը առած հասնում է Ջալալ-Օղլի, սակայն Երեւան տանող երկաթուղին թուրքական վտանգից զերծ պահելու համար իջնում է Լոռուայ կիրճը ու իր հսկողութեան տակ վերցնում երկաթուղին[32]: Սակայն իմանալով հայրենանուէր մեծ բանաստեղծ ... Թումանեանի Դսեղում լինելը, իր շտաբով երեք-չորս օր հիւրընկալւում է նրա մօտ: Ապա թուրքերի առաջխաղացումը կասեցնելու նպատակով զօրամասը Դիլիջան է փոխադրում եւ այնտեղ խրամատաւորւում:

Սակայն զօրավարը, մերժելով Բաթումի կնքած ստորացուցիչ պայմանագիրը[33] ստիպուած է լինում թողնել Դիլիջանի պաշտպանութիւնը եւ անցնել Պարսկաստան՝ միանալու Ուրմիայում ու Սալմաստում գտնուող 60 հազարից աւելի ասորիների ու Վանից գաղթած 25 հազարից աւելի հայերի հետ ու շարունակել ազգային ազատագրական պայքարը թուրք բռնադատիչների դէմ:

ՆՈՐ ՄՏԱՅՂԱՑՈՒՄՆԵՐ ԴԺՈՒԱՐԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1918 Յունիսի սկզբի օրերն էին: Ելենովկայում մենք նորից խմբուեցինք մեր պաշտելի կուռքի՝ Անդրանիկի դրօշի տակ, կազմ ու պատրաստ նրա հրամանը կատարելու: Սակայն մենք այստեղ նրան հանդիպեցինք միանգամայն փոխուած: Այս երկաթակուռ մարդու անվհատ հոգին եւ աստղեր խոյահարող կամքը, աւելի ամուր ու վճռական էր դարձել: Առանց այն էլ սակաւախօս զօրավարը, աւելի սակաւախօս էր դարձել: Նրա պղնձագոյն դէմքը նմանուել էր դարերի կողմից կնճռոտուած որձաքարի: Կրակոտ աչքերի փայլը աւելի էր ուժեղացել, բայց նրանցում նշմարելի էր ինչ որ թախիծ, խորը, սիրտ մաշող թախիծ:

Ահա այստեղ էր, որ կամաւորներիցս շատ շատերն իմացան՝ Փետրուարի վերջին շաբաթում Էրզրումում, իսկ Ապրիլ-Մայիսին Ալեքսանդրպոլի շրջանում, Ջալալ-Օղլիում եւ Դիլիջանում տեղի ունեցած դէպքերի ծանր տպաւորութիւնների, առանձնապէս հայ անունը կրող դաւաճանների կատարած սառը արարքները, որոնց հետեւանքով հերոսի մազերն արդէն սպիտակել էին, իսկ նրա առնական ու խոհուն դէմքի վրայ ժպիտն իսպառ չքացել էր[34]:

Անդրանիկը, նոր չէր, որ զէնք էր վերցնում:

Նա շուրջ քսան տարի մաքառել էր նենգ ու արիւնաքամ թուրք յօշոտող փաշաների դէմ: Մեծ կամ փոքր խմբով արծուի նման միշտ խոյացել էր տմարդի թշնամու վրայ ու միշտ էլ յաղթել: Ետ վերադարձնելով խեղճ ու թշուառ աշխատաւորից թալանուած ինչքը: Նա երկար ու ձիգ տարիներ էր կռուել եւ այդ կռիւներում ոչ մի անգամ ետ չէր նայել: Սիրուել էր ոչ միայն հայ, այլ նաեւ քուրդ ու միւս ազգութիւններին պատկանող, քաջութիւնը յարգող բազմաթիւ մարդկանց կողմից: Չար թշնամու արձակած միլիոնաւոր գնդակներից եւ ոչ մէկը զօրութիւն չէր ունեցել խոցելու թէկուզ նրա գարշապարը: Անխոցելի առասպելական անուն էր վաստակել Անդրանիկը: Նրան ոչ միայն սիրում ու յարգում էին իր կամաւորները, այլ ողջ հայութիւնը, որոնք համարում էին իրենց փրկութեան յոյսը: Նրա քաջութեան ու ռազմական տաղանդի հետ հաշուի էին նստում նաեւ ցարական բարձր հրամանատարութիւնը, նոյնիսկ հակառակորդը՝ թուրքական հրամանատարութիւնը:

Ուստի պատահական չպէտք է համարել Անդրանիկի Էրզրումի ուղղութեամբ գործող զօքրի գլխաւոր հրամանատար նշանակուելը:

Սակայն փոքրաթիւ կամաւորներով Էրզրում հասնելով, Անդրանիկը այնտեղ գտել էր միանգամայն բարոյալքուած զինուորականութիւն: Թուրքական հրամանատարութիւնը կարողացել էր իր լրտեսական ցանցը՝ շրջակայքում եւ յատկապէս Էրզրումում, հաշուի առնելով նրա ռազմագիտական նշանակութիւնը, այն աստիճան ուժեղացնել, որ

քաղաքը պաշտպանող զօրահրամանատարութեան կողմից շատերը՝ ռուս, վրացի եւ հայ կապի մէջ էին մտել նրանց հետ, եւ չբաւարարուելով ռազմական գաղտնիքներ ստանալով, միաժամանակ զէնք եւ զինամթերք էին ձեռք բերում: Արեւմտեան Հայաստանի մուտքի եւ ելքի ռազմական գլխաւոր դարպասը գտնւում էր միանգամայն անյուսալի, ապաշնորհ դաշնակ ղեկավարների՝ Տիգրան Աղամալեանի, Արմենակ Միրոշեանի, Շարաֆեանի եւ այլոց ձեռքերում:

Զօրավարը միքանի կոնկրէտ միջոցառումներ էր կիրառել՝ կարգը եւ զինուորների բարոյական ոգին պատշաճ բարձրութեան վրայ դնելու համար, սակայն 5-6 օրուայ ժամանակամիջոցը անհնարին էր դարձնում այն:

Կիրառուած միքանի հրապարակային պատիժները, սպայական կազմից միքանիսի հեռացումները առանձին նշանակութիւն չունեցան: Բերդ քաղաքում եւ դիրքերում գտնուող զինուորների մէջ ստեղծուել էր կործանարար մի տրամադրութիւն, որ Արեւմտեան Հայաստանը պէտք է պաշտպանեն արեւմտահայերը, իսկ Արեւելեան Հայաստանը՝ ռուսահայերը:

Պարզ է, որ Անդրանիկը նման ծանր իրադրութեան մէջ 5-6 օրում չէր կարող իր կամաւորների փոքր խմբով ցանկալի արդիւնքների հասնել: Այդ պաշտպանների մէջ նոյնիսկ գտնուեց այնպիսի մի բարոյազուրկ, ժողովրդից ու մարդկութիւնից արհամարհուած այնպիսի մի էակ, որ չսարսռաց զէնք բարձրացնել զօրավարի վրայ, այն մարդու վրայ, որի մէջ էր լեռնացել տանջամահ արուած եւ այրուող ողջ հայութեան ուժն ու վրէժը, դարերից եկած ապրելու ու յաղթելու նրա վառ հաւատը, այն մարդու վրայ, որն իր ամբողջ կեանքը, մասն առ մաս նուիրել էր աշխատաւոր հայութեան փրկութեան գործին: Այդ սրբացած մարդը, Էրզրումում զինուորներին ճառ արտասանելիս, վիրաւորուեց մի հայ սառը զինուորի գնդակով:

Չնայած գնդակը ծակել էր զօրավարի ձեռքը, բայց կսկծում էր նրա սիրտն ու հոգին: Նա համոզուեց, որ աւելորդ է Էրզրումում մնալը եւ նահանջի հրաման արձակեց: Էրզրումում տեղի ունեցած հայադաւ դէպքը զօրավարի վրայ շատ խոր ազդեցութիւն էր գործել: Նա, որ մեծ հաւատ ունէր հայ ժողովրդի անյողդողդ կամքի ու քաջութեան մասին, հոգեկան ու բարոյական մեծ ողբերգութիւն ապրեց:

Սարիղամիշ հասնելիս անմիջապէս իր հրաժարականը ներկայացրեց դաւաճաններով շրջապատուած լինելու համար: Ելենովկայում նա հրաւիրեց իր տրամադրութեան տակ եղած զօրախմբի ղեկավարների խորհրդակցութիւն, որտեղ նրանց հարցրեց իր յետագայ գործողութեան պլանների մասին: Խորհրդակցութիւնը միահամուռ

անվերապահօրէն հաւանութիւն տուեց նրա առաջարկած պլաններին ու ծրագրերին:

Ըստ այդ պլանի Անդրանիկն իր կամաւորներով պէտք է շարժուէր դէպի Ջուլֆա-Սալմաստ-Ուրմիա եւ ապա ուժեր կենտրոնացնելով մտնէր Վան, Էրզրում, շարժուէր դէպի Կարս: Անդրանիկի այդ ռազմերթն իր ողջ էութեամբ ուղղուած էր արդէն կործանման եզրին կանգնած հայութեան փրկութեան նպատակին:

Անդրանիկը նպատակ չի ունեցել Խոյից անցնել անգլիացիների կողմը եւ դառնալ նրանց վարձկան: Այդ բանը ոչ մի առնչութիւն չունի իրականութեան հետ: Իրականում Անդրանիկը այդ պլանով հետապնդում էր հեռուն գնացող նպատակներ, որ եթէ յաջողութեամբ պսակուէր, յետագայում իր ոսկէ էջ տարեգրութեան փառապսակը պէտք է հանդիսանար:

1918ին ռազմաքաղաքական ծանր պայմաններ էին ստեղծուել Հայաստանի եւ հայ ժողովրդի համար: Թուրքական աւազակաբարոյ բանակները հաշուի չառնելով միջազգային ոչ մի օրէնք ու իրաւունք արշաւում էին Արեւելեան Հայաստանի վրայ, հրի ու սրի մատնելով անպաշտպան բնակչութեանը:

Դաշնակցական ... կուսակցութիւնը ... ի վիճակի չեղաւ ի մի հաւաքելու եւ լաւագոյն ձեւով օգտագործելու ներքին ուժերը ընդհանուր թշնամու դէմ դիմագրաւելու: Դեռ աւելին, նա թուրքական զօրահրամանատարութեան պահանջով ու թելադրանքով սկսեց շարժուել եւ հետապնդել զօրավար Անդրանիկին, պարտաւորուելով զինաթափել նրա կամաւորներին եւ արգելել նրանց կողմից ձեռնարկուած ամէն մի գործողութիւն, հնարաւորութեան դէպքում նոյնիսկ թուրքերի ձեռքը յանձնել Անդրանիկին, միաժամանակ Բաքուի կոմունայի կողմում կռուող հայ զինուորներին դեմոբիլիզացնել[35]:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ Անդրանիկը չէր կարող հնազանդուել եւ իրագործել դաշնակների ... քաղաքականութիւնը, ուստի պէտք է մտածէր ու մի ելք գտնէր ժողովրդին դուրս բերելու համար:

Եւ ահա Ջուլֆա-Ուրմիա ռազմերթի մէջ Անդրանիկը փնտռում էր այդ ելքը: Յայտնի է նաեւ այն փաստը, որ երբ 1915թ. թուրքական կառավարութիւնը մինչ այդ մարդկային պատմութեանն անծանօթ ոճիր կատարեց՝ ոչնչացնելով հայ ժողովրդի երկու երրորդից աւելին, ամայացնելով նրա բնակարանը՝ Արեւմտեան Հայաստանը, այդ ցեղասպանութեան արգահատելի նպատակի իրականացման գործում օգտագործեցին նաեւ այդ շրջաններում ապրող քուրդ ցեղախմբերին:

1915թ. ընդհանուր եղեռնից մինչեւ 1918թ. սկզբները Պարսկաստանի Սալմաստ-Ուրմիայի շրջաններում էին կենտրոնացել Արեւմտեան Հայաստանից, յատկապէս Վանի նահանգի ազգաբնակչութեան մի

զգալի մասը, աւելի քան 25 հազար մարդ, որից հինգ հազարը՝ զինուած խմբերով միաւորուել էին հայկական ուժերի հետ եւ սկսել էին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ Պարսկաստան ներխուժած Ալի-Իսան փաշայի բանակի դէմ:

Անդրանիկի նպատակն էր այդ ուժերին օգնութեան հասնել ու ստեղծել ուժեղ բռունցք, ջախջախել թուրքական հեծեալ ուժերին եւ անցնել թշնամու բանակի թիկունքը, քանզի թուրքական զինուած ուժերը Էնվէրի հրամանով գրեթէ ամբողջապէս անցել էին Կովկաս, Բաքուն գրաւելու, Կոմունան խեղդելու եւ այլ նպատակներ իրագործելու մտադրութեամբ:

Եւ ահա Ջուլֆա-Խոյ ռազմերթի յաջող իրականացումը կը ստիպէր թուրքական զօրամասերին գլխիկոր նահանջել իրենց թիկունքում գործող Անդրանիկի դէմ: Այս դէպքում ոչ միայն կը փրկուէր Կոմունան, այլեւ Կոմունայի ուժերը հետապնդելով նահանջող թշնամուն, կ'ազատագրէին նաեւ Անդրկովկասը, այդ թւում նաեւ՝ Հայաստանը:

Անդրանիկի այս պլանի իրականացմանը զգալի չափով խանգարեցին նրա զօրախմբի հետ շարժուող հայ գաղթականութեան հոծ զանգուածը, որը խիստ կերպով դանդաղեցրեց նրա երթը եւ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ նախատեսուած գործողութեան յետագայ ընթացքի վրայ:

Ելենովկայում զօրավարը զօրամասի մարտիկներին հրաւիրում է խորհրդակցութեան ու մանրամասնօրէն բացատրում իր յետագայ գործողութիւնների ծրագիրը եւ այն ահաւոր դժուարութիւններն ու վտանգները, որ կարող էին կրել զօրամասը, ապա յանձնարարում է ազատօրէն որոշել իրենց դիրքը՝ հետեւել իրե՞ն, թէ՞ վերադառնալ իրենց ընտանիքների գիրկը: Սակայն, ի պատիւ Անդրանիկի, բոլոր մարտիկները միաբերան ասում են. «Ուր Անդրանիկը, այնտեղ էլ մենք»:

Յունիսի 12ին զօրամասը Նոր Բայազէտից շարժւում է բազմահազար գաղթականների ուղեկցութեամբ դէպի Ղարանլուղ, Քարագլուխ, Քեշիշքենդ, Սէրս, Սուլթան-Բէկ, Բազամլու, Խաչխալի, Նախիջեւան երթուղով:

Զօրավարն, ի նկատի ունենալով Ջուլֆայի կամրջի ռազմաստրատեգիական կարեւոր նշանակութիւնը, հրամայեց շարժուել դէպի Ջուլֆա: Նա՝ անցած մէկ հարիւրեակ հեծեալ կամաւորների գլուխ, ընթանում էր առաջից եւ ձգտում էր, որքան հնարաւոր է շուտ հասնել ու անցնել կամուրջի միւս ափը, քանի դեռ այն չեն գրաւել թուրքերը:

Անդրանիկն իր հերոս կամաւորներով հասնում է կամրջին այն ժամանակ, երբ արդէն թուրքական բանակի (բերինջի) ջոկատներից մէկը գրաւել էր այն: Թուրքերը յատուկ ուժեղացուած պահակութիւն էին կարգել Երասխ գետի պարսկական ափին:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ստեղծուած դրութեան մէջ հարցի ելքը կախուած է վճռականութիւնից ու յանկարծակիութիւնից, հրամայեց իր հեծելազօրայիններին հետեւել իրեն, միաժամանակ փողհարներին կարգադրեց նուագել թուրքական քայլերգը եւ կամուրջի վրայով սրընթաց անցնում է այն ափը, գերելով թուրք պահակախմբին:

Անդրանիկը, որը բոլոր մարտերում սեփական օրինակով էր ոգեւորում, հասնելով թուրքական զինուորներին, մերկացնելով սուրը լեռնային արծուի արագութեամբ յարձակուեց պահակախմբի վրայ՝ իր ետեւից տանելով հերոս մարտիկներին: Այդ փոքրիկ տակտիկական հնարքը յաջողութեամբ պսակուեց: Թուրքական պահակախումբը անակնկալի գալով ոչ մի դիմադրութիւն չկարողացաւ թոյլ տալ եւ նրանցից միքանիսն էլ ոչնչացաւ ձիերի սմբակների տակ:

Նոյն օրը զօրամասն ու 25 հազարից աւելի գաղթականութիւնն անցաւ պարսկական Ջուլֆա եւ սկսւում է պահեստներում հարիւրաւոր տոննաներով չամիչի եւ այլ սննդամթերքների թալանը, քաղցած ու մերկ գաղթականութեան կողմից:

Հասկանալի է, թէ այս մարդիկ ինչպիսի ախորժակով պիտի ուտէին՝ այն հնարաւոր չէ պատկերացնել:

Յաջորդ օրը՝ առաւօտեան լուսածագին զօրամասը ուղղութիւն է վերցնում դէպի Սալմաստ:

Առջեւից արագ ընթանում էր հեծելազօրը, նրան հետեւում էր հետեւակը, իսկ նրանց ետեւից՝ հազարաւոր գաղթականներ՝ երեխաներով ու պարկերով բեռնաւորուած: Յունիսեան վերջին շոգ օրերն էին, անջրդի հողամասերով ժողովուրդը յոգնած ու պապակած հետեւում էին իր սիրելի փրկիչ ազատարարին: Հեծելազօրն իր արագավազութեամբ մեծ տարածութիւն կտրելով շատ էր հեռացել հետեւակազօրից եւ ահա Սէյդիւար գիւղի մօտակայքի բլուրների վրայ խրամատաւորուած էր թուրքական մի զօրամաս՝ հրետանիով եւ երեք գնդացիրներով: Մօտ հարիւր հոգուց բաղկացած հեծելազօրը մօտենում է նրանց ու յանկարծակի ուժեղ գնդակոծման են ենթարկւում: Մենք արագօրէն նետւում ենք մօտակայքի ցորենի արտերի մէջ ու սկսում պատասխան կրակ բացել: Սակայն դիրքերի անյարմարութեան պատճառով ի վիճակի չենք լինում որեւէ ճնշում գործադրել նրանց վրայ: Ահա այս ծանր պահին որոտում է զօրավարի յուսադրող ձայնը՝ առաջ քաջերս: Ու սրարշաւ սլանում է թշնամուն գնդացրային կրակակէտերի վրայ, նրան հետեւում են հեծելազօրի հերոս մարտիկները եւ միքանի րոպէից յետոյ ահաբեկուած թշնամին թողնում է հրանօթներն ու գնդացիրները ու ճողոպրում: Թշնամին բլուրներից դէպի հարթավայրերը փախչելիս գրեթէ բոլորը սրախողխող են լինում նրանց հետապնդող հեծելազօրի քաջազունների կողմից: Այդ բոլորը

կատարուեց աննախադէպ հուժկու գրոհով եւ այն էլ շուրջ մէկուկէս ժամուայ ընթացքում եւ միայն մեր հեծելազօրի կողմից. դեռ հետեւակային վաշտերը տեղեակ չէին այդ նշանակալից մարտի ու յաղթանակի մասին:

Թուրքական ընտիր բանակի զօրամասի ասկեարները շփոթուած ու գլուխները կորցրած լեղապատառ դիմում են փախուստի, որպէս մի խաժամուժ, որին ոչնչացնելն արդէն մեծ ջանք չէր պահանջում:

Անդրանիկն իր փոքրաթիւ արծիւներով սուրաց նրանց ետեւից:

Հետապնդումը շարունակուեց մինչեւ Սէյդիւար գիւղը եւ ոչնչացնելով զօրագնդի մնացորդները, այդտեղ գերի է վերցնում նաեւ խմբի հրամանատարին, որը մի յաղթահասակ թուրք էր: Սէյդիւարը Խոյ քաղաքից տասնեօթ կիլոմետր հեռաւորութեան վրայ էր գտնւում:

Հենց այստեղ էլ մենք երկու ժամ յետոյ հասանք Անդրանիկին: Մեր դանդաղ ընթացքի հիմնական պատճառը այն 25 հազար արեւմտահայ գաղթականներն էին, որոնք ոչ մի կերպ չէին ուզում հրաժարուել Անդրանիկի պաշտպանութիւնից:

Սէյդիւարը հայկական մեծ գիւղ էր, թուրքերը ներս խուժելով բնակչութեանը կոտորել էին: Թուրքական զօրամիաւորման ջախջախումից յետոյ, թաքստոցներից հաւաքուել էին գիւղացիներ, որոնք զօրավարին լացակումած պատմում էին թուրք ասկեարների կատարած վայրագութիւնների մասին: Միաժամանակ նրանց պատմածներից Անդրանիկն իմանում է, [թէ] թուրքական զօրամասերի ճնշման տակ երկու օր առաջ հայ-ասորական ուժերը նահանջել են Սալմաստից: Ահա այստեղ էլ զօրավարը որոշում է փոխել իր երթուղին՝ Խոյի վրայով շտապ կտրել-անցնել թուրքերի թիկունքը: Անդրանիկը որոշում է իր մտադրութիւնը հաղորդել զօրամասին: Զօրամասի սպայական կազմի ու գաղթականների ներկայացուցիչների ներկայութեամբ յայտարարում է. «Գիտեմ, որ արդէն 11րդ օրն է, ինչ չէք հանգստացել, չէք քնել եւ ձեր քաղցը չէք յագեցրել: Ես առաջարկում եմ դիմանալ եւս մի քանի ժամ, գրաւենք Խոյն ու նրա շրջակայ բարձունքները, որոնք իշխում են քաղաքի վրայ, այնուհետեւ կարելի է լաւ հանգստանալ»: Զօրավարի այս առաջարկը ռազմագիտական տեսակէտից միանգամայն ճիշտ էր, քանի որ պէտք չէր ժամանակ կորցնել, որը կարող էր թշնամու օգտին գործել, սակայն Սմբատը ծանր ընդդիմախօսեց, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է զինուորներին մի քիչ հանգիստ տալ եւ միայն յաջորդ օրը լուսաբացին սկսել ընդհանուր յարձակումը:

Չնայած, որ Անդրանիկը համաձայն չէր Սմբատի առաջարկութեանը, բայց եւ այնպէս նրան չհակառակուելու համար, ստիպուած էր տեղի տալ, որովհետեւ Սմբատի կարծիքին էին համարեա թէ բոլորը:

Ընդհանուր համաձայնութեան գալուց յետոյ, Անդրանիկը նախազգուշացրեց սպասուող վտանգի մասին, եւ կարգադրեց կազմ ու պատրաստ լինել առաջիկայ հրամանին:

Լուսաբացին ստացուեց ընդհանուր յարձակման հրաման: Սկզբնական շրջանում ամէն ինչ բարեյաջող էր ընթանում եւ մենք գրաւեցինք քաղաքի կէսից աւելին: Արեւը հետզհետէ աւելի բարձր դիրք էր գրաւում երկնակամարում: Կռուից ու լարուածութիւնից ջերմացած զինուորներից շատերը ծարաւից պապանձուել էին եւ սկսում էին շիկանալ արեւի ճառագայթներից: Անդրանիկը անձամբ ղեկավարում էր մարտական գործողութիւնները իր հարիւրեակով Խոյ քաղաքի զօրամասերից ներս էր խոյացել, յարմար դիրքեր գրաւել: Նրա արծուենի աչքերից չէր հեռացել շրջակայ բլուրներից մէկը, որն իր յարմարաւէտ ու գեղադիր դիքով ամէն ինչ տեսանելի էր դարձնում: Նա կապաւորների միջոցով անհրաժեշտ հրամաններ էր արձակում ուժերի վերադասաւորման նպատակով:

Ուշագրաւն այն է, որ բարձունքի լանջին գտնւում էր մի մատուռ մահարձան, որ չգիտեմ պայմանական թէ ճշգրիտ վերագրւում էր Վարդան Մամիկոնեանին: Այս մահարձանի առաջ էր, որ երկու զօրավարներ հանդիպեցին 1500 տարի յետոյ: Անդրանիկը ծունկի իջնելով այդ լուռ շիրմաքարի առջեւ, գլխից հանեց կարակուլի փափախը, խոր ակնածանքով ու յուզմունքով սկսեց րոպէատեւ զրոյց իր դիւցազուն նախահօր՝ փառաբանուած զօրավար Վարդանի հետ:

- Վեր կաց, ով զօրավար, նայի հայ ժողովրդին: Օգնիր ինձ եւ պաշտպանիր քո ժողովրդին: Անմիաբանութիւնը դարձեալ գլուխ է բարձրացրել եւ ջլատում է հայի ուժերը: Ուժ տուր ինձ այս անհաւասար կռւում:

Գուցէ դեռ շարունակուէր այս երկու մեծ մարդկանց՝ մէկը խօսուն, միւսն արդէն մահարձան դարձած դիւցազուն զօրավարների խօսակցութիւնը, բայց մօտակայ ձորակից երեւացող փոշու եւ ծխի ամպերը ստիպեցին ընդհատել այն:

Հեռադիտակը մօտեցնելով աչքերին, յայտնեց, որ մեզ վրայ է գալիս թուքրական մի զօրամաս: Դա թուրքական «բիրինջի» բանակի վերջապահ ուժերն էին, որի կազմից մէկ օր առաջ ոչնչացրել էինք մի գունդ, Ջուլֆայի կամուրջը եւ Սէյդիւարի մօտակայ բարձունքները գրաւելիս: Ալի Իհսան փաշան, իմանալով Անդրանիկի առաջխաղացման մասին, շտապ համակենտրոնացնում է իր բոլոր ռազմական միաւորումները՝ Խոյի ճակատում, ի թիւս այն զօրամասի, որը հետամուտ է լինում հայ-ասորական ուժերին: Զօրավարը, կռահելով թուրքական հրամանատարութեան նպատակը, որը ձգտում էր շրջապատման մէջ վերցնել հայկական զօրամասը, հրամայեց հեծելազօրին ընդառաջ ելնել

ու կասեցնել նրանց առաջխաղացումը, մինչեւ բազմահազար գաղթականների ապահով վերադարձը: Միաժամանակ հրամայեց Սողայեան Բարունակին իր փոքրաթիւ խմբով դիրքեր գրաւել ռազմական կարեւոր նշանակութիւն ունեցող բարձունքի վրայ, որն իշխում էր շրջակայ բոլոր ճանապարհներին եւ կրակի տակ պահել թուրքական ուժերը, նրանց ուշադրութիւնը գրաւել իր վրայ ու ապահովել մնացած ուժերի կանոնաւոր նահանջը: Բացի այդ, Անդրանիկը քաջ գիտէր, որ թշնամին կ'աշխատի առաջին հերթին գրաւել Ջուլֆայի կամուրջը, որը կը նշանակէր օղակի մէջ առնել հայկական ամբողջ ուժերը ու գաղթող ժողովրդին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ հրամաններ տալուց յետոյ նա իր խմբով իջաւ լեռնալանջից եւ շարժուեց Ջուլֆա:

Սողոյեան Բարունակը, որը զօրավարի հաւատարիմներից էր ու քաջ կռուող կամաւորներից մէկը, անցաւ հրամանի կատարմանը: Սակայն քչերը հետեւեցին նրան, որոնցից մէկն էլ ես էի: Մենք բաւականին երկար ժամանակ կարողացանք զբաղեցնել թուրքական առաջ շարժուող ուժերին: Մեր դիպուկ կրակից տապալւում էին թուրք ասկեարները, շատերը յախուռն կրակում էին, բայց առանց նպատակակէտին հասնելու: Մենք կարողացանք այնքան զբաղեցնել հակառակորդին, որ համարեա լրիւ ապահովեց նահանջող հայկական ուժերի կենտրոնացումը: Հենց այստեղ էլ մենք ականատես եղանք մի հետաքրքիր տեսարանի: Թէ ինչպիսի պայմաններում, չգիտեմ, բայց Սմբատը ետեւ էր մնացել իր խմբից եւ նրան միայնակ հետապնդում էին թուրքական հինգ հեծեալ զինուորներ: Ցանկութեան դէպքում նրանք անմիջապէս կարող էին գնդակահար անել նրան, բայց հաշուի առնելով նրա արտաքին կեցուածքը, կռահել էին, որ այդ զինուորը հրամանատարական կազմից է, ու նրան կենդանի գերելը արդէն անխուսափելի էր, աջ ու ձախ կրակոցներով ցանկանում էին շփոթեցնել ու կենդանի գերել նրան: Սմբատը, որ խիստ ասպանդակելով ձիուն ձգտում էր ազատուել, երբեմն երբեմն մաւզերային կրակոցներով ջանում էր ոչնչացնել իրեն հետապնդող թուրք զինուորներին, սակայն դրանք նպատակին չէին ծառայում, ու երբ վերջացան իր գնդակները, նա ստիպուած մաւզերը ետ շպրտեց ու սկսեց աւելի խթանել խեղճ կենդանուն: Թուրք զինուորները անմիջապէս հասան մաւզերի վրայ: Այդ ժամանակ ես եւ միւս կողմից ցորենի արտում թաքնուած զինուորները շեշտակի կրակ արձակեցինք թուրք խմբուած զինուորների վրայ, որոնցից միքանիսը տեղում մնացին, իսկ երկուսը փախուստով թաքնուեցին ցորենի արտերի մէջ: Այսպէս Սմբատը փրկուեց անխուսափելի մահից:

ՆԱՀԱՆՋ: ՆՈՐ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշուի առնելով ստեղծուած դրութիւնը Անդրանիկը մէկ հարիւրեակով սուրում է դէպի Ջուլֆայի կամուրջը, գրաւելով այն՝ սահմանում է խիստ հսկողութիւն կամուրջի ապահով պահպանմանը, որպէսզի թիկունքում մնացած թէ՛ կռուող ուժերի եւ թէ՛ աւելի քան 25 հազար գաղթականների ապահով անցումը կատարուէր: Անհրաժեշտ էր ինչ գնով էլ լինի մաքրել ճանապարհը եւ ապահովել նահանջի ուղին:

Երբ արդէն ի մի հաւաքուեց հայկական ողջ նահանջող ուժերը, հրամայուեց անցնել կամուրջի ռուսական ափը: Սակայն դրանից մէկ օր յետոյ ճանապարհին հանդէս եկաւ մի նոր խոչընդոտ: Թուրքական Եայջի գիւղի կռուող ուժերը խիստ կերպով նախապատրաստուել էին դիմադրելու Անդրանիկի նահանջող ուժերին եւ ամուր դիրք էին գրաւել ճանապարհի եզրերին: Նրանց տրամադրութեան տակ կար նաեւ երկու ռուսական թնդանօթ ու գնդացիր, որոնց ղեկավարում էին թուրքական էմիսարները:

Նախայարձակ թուրքերը զէնքի ուժով ստիպում էին ռուս թնդանօթաձիգներին թնդանօթային կրակ բացել մեզ վրայ: Չնայած մահուան վտանգին ռուս թնադանօթաձիգները նշանակէտ էին վերցրել այնպէս, որ արկերը ոչ թէ պայթում էին մեր շարքերում, այլ անցնելով շարքերի վրայով, աննպատակ առանց որեւէ վնաս պատահելու մեզ:

Անդրանիկը ստիպուած եղաւ յարձակման հրաման տալ: Կարճ ժամանակից յետոյ ընկճուեց թուրքերի դիմադրութիւնը եւ մենք անցանք առաջ:

Շոգերից պատսպարուելու համար զօրամասը եւ ժողովուրդը մեկնում են Ազա, այնտեղից էլ Բիստ, Ցղնա եւ աւելի բարձրերը: Սակայն պէտք է նշել, որ այդ ժամանակ զգալի կորուստներ կրեցինք՝ բանակում ու գաղթականութեան մէջ սկսուած համաճարակի պատճառով: Զօրավար Անդրանիկը եւս վարակուեց այդ ահաւոր հիւանդութեամբ, բայց բարեբախտաբար ու արագօրէն ապաքինուեց ու միջոցներ ձեռնարկեց: Թէ՛ հայ ռազմիկների եւ թէ՛ հայ գաղթականութեան մէջ մոլեռանդ հիւանդութիւնների դէմ պայքարելու, ինչպէս նաեւ մերկ ու քաղցած զինուորներին ու ժողովրդին խնամելու, պատսպարելու բոլոր հոգսերը ծանրացրել էին հերոսի ուսերի վրայ:

Զօրավարը զօր ու գիշեր զբաղուած էր այդ ծանրագոյն աշխատանքներով եւ ահա այդ օրերին, երբ Նախիջեւանի Հայոց Խորհրդի ու ժողովրդի կողմից ընտրուած ներկայացուցիչները եկան խնդրելով Անդրանիկին շտապելու Նախիջեւան, ժողովրդին ոգեւորելու եւ տեղում գործող զինուորական ուժերին իրար միացնելու, ժողովրդի պաշտպանութեան գործը իր վրայ վերցնելու, քանի որ շուտով թուրքական բանակը շարժուելու էր Նախիջեւան ու նրա գաւառի ողջ

հայութեանը սրի քաշելու: Մանաւանդ որ տեղի խաներն ու մուսաֆաթական տարրերը մեծ պատրաստութիւն էին տեսնում թուրքական ուժերին դիմաւորելու եւ հայութեան նկատմամբ խիստ դատաստան տեսնելու: Միաժամանակ եւ ներկայացուցիչները խոստանում էին զօրավարի զօրամասին ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալու, թէ՛ նիւթական եւ թէ՛ մարդկային ռեսուրսներով: Զօրավար Անդրանիկն ընդառաջելով տեղի ժողովրդի խնդրանքին, համաձայնւում է իր զօրամասով մեկնել Նախիջեւան, թոյլ չտալ թուրքերին գրաւելու այդ բարեբեր գաւառը: Զօրավարն իր շտաբը տեղակայում է Ապրակունիսում:

Տեղեկանալով գաւառի իրավիճակի մասին, որոշում է Նախիջեւանի գաւառը յայտարարել Խորհրդային Ռուսաստանի անբաժան մասը եւ այդ մասին հեռագրում է Բաքու՝ Ստեփան Շահումեանին: Հարկ է նշել, որ զօրավարի խորհրդային իշխանութեան կողմ անցնելու հեռագրի հրապարակումից յետոյ էր, որ տեղի խաներն ու մուսաֆաթականները անմիջապէս հրաւիրեցին թուրքական փաշաներին շտապ կարգով զօրքեր մտցնել Նախիջեւան՝ Անդրանիկի նորայայտ իշխանութեանը վերջ տալու:

Մենք յաջորդ օրը շարժուեցինք Նախիջեւան: Մինչեւ Նախիջեւան հասնելը թուրքական Նեհամ մեծ գիւղի մօտ Անդրանիկը բանակը բաժանեց երկու մասի: Մի մասը Սմբատի եւ Բոնապարտեանի գլխաւորութեամբ շարժուեց դէպի Նախիջեւան՝ թուրքական զօրաբանակի առաջխաղացումը կասեցնելու, իսկ միւս մասը՝ իր գլխաւորութեամբ, որի մէջ էի նաեւ ես, շարժուեց դէպի Նեհամ:

Անդրանիկը հրամայեց Նեհամը շրջապատել երեք կողմերից եւ թողնել միջանցք՝ բնակչութեանը դուրս գալու համար: Սակայն հրամանը ճիշտ չկատարուեց, գիւղը ամբողջապէս շրջապատուել էր, որի հետեւանքով գիւղի ողջ մուսուլման բնակչութիւնը 24 ժամ խիստ դիմադրեց: Այստեղ այնպիսի դրութիւն ստեղծուեց, որ կամ պէտք է ոչնչացուէր գիւղի ողջ բնակչութիւնը, որպէսզի գրաւուէր այն, կամ էլ պէտք է դադարեցուէր նրա պաշարումը եւ շարունակուէր ճանապարհը դէպի առաջ, թիկունքում թողնելով արդէն խիստ թշնամական տրամադրութեամբ մի մեծ ուժ:

Չնայած դրան, զօրավարը դեռեւս մինչեւ պաշարումը խիստ հրաման էր արձակել աշխատաւոր մուսուլման բնակչութեան նկատմամբ բռնութիւններ չիրականացնել: Ուստի մեզ չզարմացրեց զօրավարի՝ պաշարումը դադարեցնելու մասին հրամանը: Հակառակ դէպքում Նեհամի գրաւումը մեծ դժուարութիւնների հետ չէր կապուած, եթէ հաշուի չառնուէր այդ գործողութիւնների ժամանակ գիւղի բնակչութեան ունենալիք հսկայական կորուստը:

Արդէն վերացուել էր պաշարումը, երբ Սմբատից ստացուեց գրութիւն, որով խնդրում էր, որ իր ուժերն ի վիճակի չեն դիմադրելու թշնամու գերազանց զօրամասերին, ուստի շտապ կերպով օգնութիւն չստանալու դէպքում դադարեցնելու է դիմադրութիւնը եւ հարկադրուած է նահանջելու:

Գրութիւնն ստանալու պէս Անդրանիկը թելադրում է դիմադրել, մինչեւ յաջորդ օրը ժամը 12ը, մինչեւ օժանդակ ուժերի հասնելը: Կարգադրում է միքանի տասնեակ զինուորներ, տեղական հայերի հետ թողնել Նեհրամի ըմբոստացողներին հսկելու, իսկ միւսներով հապճեպ շարժուել դէպի Նախիջեւան, ուր եւ կռուում էր Սմբատն իր զօրախմբով:

Սակայն մինչեւ զօրամասի տեղ հասնելը Սմբատը նշուած ժամանակից շուրջ երկու ժամ շուտ թողել էր դիրքերը: Սմբատը ժամ առաջ թողել էր եւ նահանջել դէպի Ապրակունիս:

Թուրքական հրամանատարութիւնը լսելով Անդրանիկի բանակի վրայ հասնելու մասին՝ նահանջի հրաման էր արձակել եւ առանց ռազմական կարգը պաշտպանելու 16 կլմ. ետ էր նահանջել: Հետապնդեցինք նրանց բաւական ժամանակ: Սակայն մի կարճ ժամանակից յետոյ թուրքերը կենտրոնացնում են իրենց ուժերը եւ այնպէս էլ մարդկային տեսակէտից միքանի անգամ գերակշիռ էին մեր ուժերին, բացի այդ նաեւ թիկունքից էլ մուսաֆատական բանդաներն էին ուժգին հարուածում:

Զօրավարը ստիպուած էր դիմադրել այնքան ժամանակ, մինչեւ գաղթականների ու տեղական հայ բնակչութեան ապահով հեռացումը: Այնուհետեւ Անդրանիկն իր ուժերը կենտրոնացրեց Աբրակունիսում, որտեղ Սմբատն ու Բոնապարտեանն էլ իրենց ջոկատներով հանգստանում էին:

Անջնջելի տպաւորութիւն է թողել իմ յիշողութեան մէջ Անդրանիկի հանդիպումը Սմբատի եւ Բոնապարտեանի հետ:

Հանդիպումը տեղի ունեցաւ զօրախմբի ներկայութեամբ:

Անդրանիկի գալստեան լուրն առնելով Սմբատի եւ Բոնապարտեանի գլխաւորած ջոկատի մնացորդները մարտական կարգով հաւաքուել էին: Կանգնեցինք նաեւ մենք: Զօրավարը չկարողացաւ զսպել իր զայրոյթը: Բոնապարտեանին սխալ հրամանի համար սոսկալի ծեծի ենթարկեց, որից յետոյ դառնալով Սմբատին, որին ոչ միայն յարգում էր այլեւ նաեւ սիրում, ասաց,- եթէ չես կարող կռուել թշնամու դէմ, ինչու ես իզուր եղած մեր փոքր ուժերը կոտորում, դրանով իսկ օգնում թշնամուն,- եւ առանց սպասելու պատասխանի մէկը միւսի ետեւից երեք շառաչուն ապտակ հասցրեց նրա դէմքին:

Սմբատը, որը եւս փոքր հեղինակութիւն չէր ներկայացնում բոլորիս աչքում, խիստ զգացուեց եւ նեղացած տոնով զգուշացրեց Զօրավարին,

որ այլեւս իր վրայ ձեռք չբարձրացնի, որ կատարած սխալի համար չի կարելի հրապարակային նման անարգանքի ենթարկել իրեն:

Մենք Ապրակունիսում երկար չմնացինք:

Անդրանիկը վերադասաւորեց իր ուժերը եւ գաղթականութեանն էլ որոշ հնարաւորութիւն տալով աւելի ապահով վայրեր մեկնելու, ապա սկսեց զօրամասին հրամայել առաջ ընթանալու:

Յաղթահարելով մեծ դժուարութիւններ մենք անցում կատարեցինք Օրդուբադի լեռներով եւ իջանք Ղափանի սահմանային գիւղերը...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայկական զօրամիաւորումը սկսել է ձեւաւորուել 1917ի Ապրիլից՝ Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան «Բանակի Ազգայնացման Հիմնական Դրոյթները» օրէնքի հրապարակումից յետոյ: Ազգայնացուած բանակի խնդիրն էր արտաքին թշնամուց հայրենիքի պաշտպանութիւնը եւ պետութեան ներքին կեանքում կարգուկանոնի հաստատումը:

[2] Ապահովութեան Խորհուրդը ձեւուորուել էր 1917 Դեկտեմբերին Թիֆլիսում Արեւմտահայերի Ազգային Խորհրդի կողմից, հայկական ռազմական ուժերի կազմաւորման նպատակով:

[3] ՀԱԱ, ֆ. 105, g.1, գ. 3002, թթ.34-38:

[4] ՀԱԱ, ֆ. 221, g.1, գ.241, թ.51:

[5] ՀԱԱ, ֆ. 221, g.1, գ.241, թ.52:

[6] http://armscoop.com/wp-content/uploads/2015/11/ANDRANIK-OZANYAN-150.pdf . նաեւ՝ Գայիանէ Մախմուրեան, «Արեւմտահայ Դիւիզիան Եւ ԱՄՆի Քաղաքականութիւնը 1917-1918թթ.», *Անդրանիկ Օզանեան - 150, Յօդուածների Ժողովածու*, Երեւան Պատմութեան Ինստիտուտ, 2015, էջ 73-74:

[7] Ա. Յարութիւնեան, *Թուրքական Ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. Եւ Ինքնապաշտպանական Մարտերը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 122:

[8] 1918 Յունուարի 16ին կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատար զօրավար-տեղակալ Եւգենի Լեբեդինսկու հրամանով Անդրանիկին շնորհւում է զօրավար-տեղակալի աստիճան:

[9] Անդրանիկը Էրզրումի ողբերգութեան պատճառը համարել է կազմակերպուածութեան բացակայութիւնը, աւանդական հայրենասիրութեան նուազումը եւ դաւաճանութեան սողոսկումը:

[10] Ազգային զօրամասեր ստեղծելու գաղափարը բխում էր բացառապէս ռազմաճակատի շահերից, իսկ նրա նախաձեռնութիւնը գալիս էր ժամանակաւոր կառավարութիւնից, ռուսական բարձր հրամանատարութիւնից:

[11] Զօրավար Նազարբեկեանի՝ 1918 Մարտի 4ի թիւ 3 հրամանով Ա. Հրաձգային Հրետանային Բրիգադը վերանուանւում է Բ. Հայկական Հրաձգային Դիւիզիայի Շտաբ եւ Բ. Հայկական Հրաձգային Հրետանային Բրիգադ, եւ

ընդհակառակը՝ Բ. Դիւիզիայի Շտաբը եւ Բ. Հրետանային Բրիգադը կոչւում են Ա. Հրետանային Բրիգադ: Ա. Հայկական Դիւիզիայի մէջ մտնում են 1-4րդ հրաձգային գնդերը, իսկ 2րդ դիւիզիայի մէջ՝ 5-8րդ հրաձգային գնդերը: Առաջին դիւիզիայի հրամանատարն էր Արէշեանը: Երկրորդինը՝ Սիլիկեանը: Յետագայում մարտական գործողութիւններում անվճռականութիւն դրսեւորելու համար Արէշեանը պաշտօնանկ է արւում եւ նրա փոխարէն նշանակւում է Ա. Տէր-Յակոբեանը:

[12] ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.2, թ.1:

[13] ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.2, թ. 6:

[14] ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.2, թ.3:

[15] Եղիշէ Քաջունի, *Զօրավար Անդրանիկ, Հայկական Առանձին Հարուածող Զօրամասը*, Երեւան, Հայկական Ուսումնասիրութիւնների Անի Հիմնադրամ, 2015, էջ 18:

[16] Սիբիրեան էր կոչւում, քանի որ կազմուած էր թուրքական բանակի գերի ընկած հայերից, որոնք աքսորուել էին Իրկուտսկ (Ռ. Սիմոնեան, *Ադրանիկ, Սիբիրեան Վաշտի Ոդիսականը*, Երեւան,Նոյեան Տապան, 2006:

[17] Հ. Կարապետեան, *Անդրանիկ, Հտր. 3*, Երեւան, Հայաստան Հրատ., 1994, էջ 492:

[18] ՀԱԱ. Ֆ.370, ց.1,գ.1, թ. 14:

[19] Նոյն, էջ 505:

[20] ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.1, թ. 26:

[21] ՀԱԱ, ֆ. 370, ց.1, գ.5, թ. 7:

[22] ՀԱԱ, ֆ. 370, ց.1, գ.12, թ.1:

[23] http://armscoop.com/wp-content/uploads/2015/11/ANDRANIK-OZANYAN-150.pdf, Մախմուրեան, «Արեւմտահայ Դիւիզիան», էջ 73-74:

[24] Քաջունի, էջ 19:

[25] ՀԱԱ, ֆ.370, ց.2, գ.40ա, էջ 93-102:

[26] Շրջան Թիֆլիսում :

[27] Գնացքաշար

[28] Թուրք էմիսարները Թուրքիայից ուղարկուած յատուկ մարդիկ էին, որոնք տեղական թուրքերի միջոցով անկայունացնում էին իրավիճակը:

[29] Անդրանիկը եկել էր Ալեքսանդրապոլ կովկասեան ռազմաճակատի գլխաւոր հրամանտարութեան 1917 Դեկտեմբերի 22ի հրամանով Հայկական Յատուկ Հաւաքական Ջոկատ կազմաւորելու նպատակով:

[30] Բրեստ-Լիտովսկի Պայմանագիրը կնքուել էր 1918 Մարտի 3ին Խ. Ռուսաստանի եւ Գերմանիայի ու նրա դաշնակիցների, այդ թւում՝ Թուրքիայի հետ: Պայմանագրով Թուրքիային էր յանձնւում ոչ միայն ամբողջ Արեւմտեան Հայաստանը, այլեւ Արեւելեան Հայաստանի մասը կազմող Կարսը, Արդահանը, ինչպէս նաեւ Վրաստանից՝ Բաթումը: Պայմանագրի 4րդ կէտում ասւում էր. «Ռուսաստանը կ'անի իրենից կախուած ամէն ինչ, որպէսզի ապահովի Արեւելեան Անատոլիայի գաւառների (Արեւմտեան Հայաստան) շուտափոյթ մաքրումը եւ դրանց օրինական յանձնումը Թուրքիային: Արդահանի, Կարսի ու

Բաթումի օկրուգները եւս անյապաղ պիտի մաքրուեն ռուսական զօրքերից»: Այսինքն՝ վերականգնում էր 1877-1878՝ ռուս-թուրքական սահմանագիծը: Պայմանագիրը յաղթաթուղթ դարձաւ Թուրքիայի ձեռքին իր յետագայ զաւթողական ծրագրերն իրականացնելու համար: Թուրքական պատուիրակութիւնը, գօտեպնդուած իր ռազմական յաջողութիւններով, պահանջեց Թուրքիային յանձնել Կարսը, Արդահանը, Բաթումը:

31 Ալեքսնադրապոլը գրաւուեց Մայիսի 15ին դիւանագիտական խարդաւանքներով: Մայիսի 14ին թուրքերը վերջնագիր են ներկայացնում Ալեքսանդրապոլի կայազօրին՝ յանձնել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգիծը, իբր իրենց զօրքերը Պարսկաստան անցկացնելու եւ անգլիացիների դէմ կռուելու համար: Սակայն չսպասելով վերջնագրի ժամը լրանալուն, առաւօտեան ժամը 7ին ռմբակոծում են քաղաքը:

32 Երկաթուղին Անդրանիկի կողմից հսկողութեան տակ էր վերցուել Նազարբեկեանի հրամանով:

33 Բաթումի Պայմանագրով թուրքերը պարտաւորեցնում են Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը զինաթափել եւ ցրել ռազմական միաւորումները:

34 Ի պատասխան 1919 Յունուարի 25ի Արմէնկոմի ներկայացուցիչ Արսէն Խաչիկեանի նամակին, որով նա փոխանցելով հայ երիտասարդութեան հիացմունքը եւ սէրը զօրավարի նկատմամբ, հրաւիրում էր մասնակցելու Արեւմտահայերի 2րդ Համագումարին, Անդրանիկը մերժում է, պատասխանելով որ ինքը մեղաւոր չէ, քանի որ «արիւնս է սառած եւ զգացմունքներս մեռած» (ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.61, թ. 6):

35 Զինաթափել:

THE MEMOIRES OF MIHRAN KHACHADURIAN ON THE ACTIVITIES OF THE ARMENIAN SEPARATE MILITARY STRIKE FORCE COMMANDED BY GENERAL ANTRANIG

(Summary)

GARINE ALEXANIAN
karineal@mail.ru

The memoires of Mihran Khachadurian, a volunteer of the Armenian Separate Military Strike Force, shed light on the corps commanded by General Antranig. The document elaborates the fights and battles the corps had in south-western Armenia on the borders with Iran and Turkey, during April 1918. These encounters made Antranig unable to contribute to the Armenian war efforts at the pivotal battles of Sardarabad and Bash Abaran in May 1918.

The memoires add further details about the human character and military abilities of the general and the fame and popularity he had throughout the Armenian nation, as well as his organizational skills and military shrewdness, his sympathy for law and justice, his patriotism and sense of responsibility.